

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. ապրիլի 25-ից 27-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (Պեկին) բնապահպանության նախարար Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

**1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Էրիկ Գրիգորյան

**2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

Բնապահպանության նախարար

**3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏԸ**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (Պեկին)

2019թ. ապրիլի 25-ից 27-ը

**4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Գոտի և ճանապարհ միջազգային համագործակցության համաժողովի քարտուղարություն

**5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն՝ «Գոտի և ճանապարհ 2-րդ միջազգային համաժողովին»:

**6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Այցի շրջանակներում մասնակցել եմ «Գոտի և ճանապարհ միջազգային կանաչ զարգացման կոալիցիայի» մեկնարկին նվիրված պլենար նիստին և «Կանաչ Մետաքսի ճանապարհ» թեմատիկ համաժողովին, որի ընթացքում հանդես եկա ելույթով (ելույթը կցվում է): Ելույթի ժամանակ, ի թիվս այլ կետերի, նշեցի նաև, որ Հայաստանը միացել է Գլոբալ էլեկտրական շարժիչների ծրագրին և էլեկտրական շարժիչների խթանման համար Հայաստանում իրականացվում են հստակ քայլեր:

Մասնակցություն եմ ունեցել նաև «Գոտի և ճանապարհ 2-րդ միջազգային համաժողովի» բացման արարողությանը, բարձրաստիճան ղեկավարների

համաժողովին, կարճ հարցազրույց եմ տվել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության պետական CCTV-13 հեռուստաալիքին:

## **7. ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

Թեմատիկ համաժողովի շրջանակներում հանդիպում ունեցա Չինաստանի Ժողովրդական Հանրապետության էկոլոգիայի և շրջակա միջավայրի նախարար Լի Գանծիեի հետ, որի ընթացքում քննարկեցինք Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի մշտադիտարկման համակարգի կատարելագործմանը, Չինաստանում անցկացվող շրջակա միջավայրի պահպանության ոլորտում վերապատրաստման դասընթացներին Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության մասնագետների մասնակցությանն առնչվող, ինչպես նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր: Հանդիպման ավարտին տեղի ունեցավ «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության էկոլոգիայի և շրջակա միջավայրի նախարարության միջև բնապահպանության ոլորտում համագործակցության վերաբերյալ» փոխըմոռնման հուշագրի ստորագրման արարողությունը:

Հանդիպում ունեցա Չինաստանի Ժողովրդական Հանրապետության անտառների, մարգագետինների, զբոսայգիների ազգային վարչակազմի ղեկավարի տեղակալ Փընգ Յոուդոնգի հետ: Քննարկվեցին Հայաստանում անապատացման և հողերի դեգրադացման դեմ պայքարի ոլորտում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության փորձի կիրառումը:

Այցի շրջանակներում երկկողմ հանդիպում եմ ունեցել նաև Կանաչ կլիմայական հիմնադրամի նորանշանակ գործադիր տնօրենի հետ, որի ընթացքում քննարկեցինք նոր ստեղծվող միասնական բնապահպանական մոնիթորինգի համակարգի աջակցման հնարավորությունները:

## **8. ԶԵՌՔԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության անտառների, մարգագետինների, զբոսայգիների ազգային վարչակազմի ղեկավարի տեղակալի Փընգ Յոուդոնգի հետ քննարկեցինք Հայաստանում անապատացման և հողերի դեգրադացման դեմ պայքարի ոլորտում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության փորձի կիրառման, դրա

շրջանակներում համատեղ պիլոտային ծրագրի իրականացման, ինչպես նաև հետագա համագործակցության վերաբերյալ հարցերը, ձեռք բերեցինք հստակ պայմանավորվածություններ մոտ ապագայում ներկայացնել Հայաստանում հատկորոշված տարածք անտառատնկման վերաբերյալ պիլոտային ծրագիր մեկնարկելու նպատակով:

Բնապահպանության նախարար՝

Էրիկ Գրիգորյան

X

---

---